

Թեան Ս. Գր. Լուսաւորիչ վանաց Մեծաւորն՝
 Հ. Գրիգոր Նէփօթ կը գրէ Հռոմէն 15 Մայ.
 1773ին առ Սարգիս Արքեպ. ի Լիվ., թէ
 "... մայիս 12 է՛հաս Սամուէլ արՏիեպիսկոպոսն
 Պուսսայու հանդերձ սարկաւագաւն իւրով ողջ
 եւ առողջ, ի բազմաց հետէ լուեալ էի զլուր
 նորին գրէթէ 30 ամէ ի վեր..." անշուշտ
 Հ. Գրիգոր՝ Սամուէլի հաւատքին մասին կ'ակ-
 նարկէ "լուր" բառով, որով կ'ունենանք
 1743 տարին, երբ Սարգիս Արքեպ. պաշտօնա-
 նապէս կաթողիկեայ հաւատքի դաւանութիւնը
 սուլաւ, ինչպէս տեսանք: Նոյնպէս վենետիկի
 Միաբան Հ. Գէորգ վ. կը գրէ Հռոմէն
 29 Մայ. 1773 առ Սարգիս Արքեպ. ի Լիվ.,
 թէ "... ի վաղուց եկն Սամուէլ վ. ն ի Հռոմ
 եւ կայ ողջութեամբ եւ զգերապայծառութիւնդ
 սիրով ողջունէ...:" Նաեւ Գրիգոր Պասմա-
 ճեան Պատրիարքը "Յիշատակարանին" մէջ
 (անդ էջ 238) կը յիշէ, թէ Բալուցի Մանուէլ
 երէցն եւ Ակնցի Աբրահամ զինք կ'ամբաստա-
 նէին "... զի իբր զՍարգիս եւ զՍամուէլ եպիս-
 կոպոսունս ես իցեմ զնոսա առաքող ի յարեւ-
 մուտս՝ տալով նոցա երկուսին ԸՃ (= 800)
 քսակ փողս հարկադիրս լինելով ի վերայ նոցա
 թէ գնացէք եւ ի յանդանօր դպրատունս բա-
 ցէք եւ սահմանեցէք, որ ես աստի յորդորեալ
 մարդիկ առաքիցեմ անտի առ ձեզ վասն ուս-
 նելոյ զլատինականս:"

Սամուէլ Եպ. նոյն 1773 տարին վենե-
 տիկ այցելած է. վասն զի ունինք Ախալցխայի